

ԼՈՒԴՎԻԳ ՖՈԽԼԴԱ

## ՀԵՐՈՍՏՐԱՏ<sup>1)</sup>

Դ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բ. գործողութեան տեսարանը:

ՏԵՄԱՐԾՈՒՅ, I

ՊՐԱԿՍԻՑԵԼ, ՄԵՏՐՕԴՈՐ և Սարուկ:

(Դուրս են դալիս Մետրօդորէ ուն կողմանկի դահլից):

ՊՐԱԿՍԻՑԵԼ (Սարուկին):

Գնա, ասա, քո աիրոջդ՝  
Գեգեսիլին, որ ես այստեղ  
Սպասում եմ ժամից աւել.  
Ապա պայծառ բակը դուրս բեր,  
Ինչ որ պէսք է գործիս համար.  
Քո տէրն արդէն զիջաւ. այստեղ՝  
Արհեստանոցըս պիտ լինի:

(Սարուկը դնում է գեգեսիս առնել):

ՄԵՏՐՕԴՈՐ Յուսամ, գործիդ բռւռն եռանդը

Զի խանգարիլ մասնակցելու  
Այն խնճոյքին, որ ես այսօր  
Ի պատիւ քո պիտի սարգեմ:

ՊՐԱԿՍԻՑԵԼ (Ճպառման):

Գործը երբէք ուրախութեան  
Զի խանգարիլ: Կախսնեմ արդեօք  
Անդրէգործին միւս հիւրերիդ

<sup>1)</sup> ՏԵՇ «Լումայ» № 4.

Շարքում այսօր։ Նա՝ որին դու  
Անուանեցիր։

**ՄԵՏՐՕԴՈՐ**                  Եթէ այդչափ

Հանելի է նորա լինեն...

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Ախոյեաններն, ինձ հաւատա,  
Ոչ թէ միայն կուռի դաշտում  
Նև մըցութեան ասպարիզում  
Պիտի տեսնուին ու հանդիպին,  
Այլ և փրփուր ու կայծ նետող  
Գինու բաժակ ձեռներն առած։

**ՄԵՏՐՕԴՈՐ** Իրաւացի է ասածըդ։

Խսկոյն և եթ մարդ կուղարկեմ՝  
Հրաւէր կարդայ նորան գալու։

(Դիմում է գեղի Հերոսարատի տոմսը):

(Գեղեցին այդ ժամանակ դուրս է գալիս իւր անից։  
Զբաղուած լինելով սարկի հիւ խօսակցութեամբ՝ նա չէ  
նկատում Պրակսիսելին և Մետրօդորին. ստրուկը դառա  
նում է Մետրօդորի տոմսը, իսկ Գնդեսին անցնում է նուռ  
խարեմը):

## ՏԵՍԼՐԸՆ, II

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** և **ԳԵԳԵՍԻՑ**

**ԳԵԳԵՍԻՑ** Տեսնել կուզես ինձ, Պրակսիսել:  
Ինչով կարող եմ ծառայել:

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Օ՛, թէ միայն ճիշդ ասացին,  
Թէ այն աղջիկն, որին երէկ  
Այնպէս տարուած ու հրճուանքով  
Ողջունեցի, —թոռնուհիդ է...

**ԳԵԳԵՍԻՑ** Գիտես և այն, թէ ողջոյնդ  
Որչափ վիշտ, ցաւ հասցրեց նորան։  
Երբէք, երբէք, ինչպէս երէկ,  
Մի օր անգամ կեանքիս մէջը  
Նև չեմ տեսել նորան այդպէս, —  
Աչքերն ուռած, արցունք կոխած,  
Յուզուած, վհատ, գողը բռնած։  
Աստուածուհու սարսափելի

Վ.ՌէԺԻՆՌՈՒԹԵԱՆ սպասելիս:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Հէնց երկիւղիս պատճառն այդ է:  
 Ուստի լացով, աղաչանքով  
 Խնդրում եմ քեզ՝ նորա առաջ  
 Խեղճիս համար միջնորդ եղիր.  
 Ե'կ, համոզիր դու կլիտիային,—  
 Կլիտիա է չէ նորա անունն,—  
 Որ իւր ուշը, չնորհն անհուն  
 Գոնէ վայրկեան ինձ նուիրէ:  
 Ես չեմ կարող հանգիստ առնել,  
 Մինչև որ նա սխալանքս  
 Ինձ չը ներէ:

**ԳԵԳԵՍԻՑ** Միթէ այդ է!  
 Կարող կլինեմ քեզ մերժելու  
 Ոյժ ունենալի Երբ որ դառնայ...

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Հապս այժմ որտեղ է նա:  
**ԳԵԳԵՍԻՑ** Երբեմնակի, հէնց այս ժամին  
 Նա գնում է Պան—Շահապի  
 Սուրբ քարանձաւն:

(Նոյում է հնում, ձեռքով աշքից արեկ լսու  
 արդիւնքով, դեպէ բեմ աշ կողմի գեղնի յետէ):  
 Առա հեռում

Նորա զգեստի քղանցները  
 Երկում են: Կամաց-կամաց,  
 Յուշիկ քայլով տուն է դառնում  
 Թաւ ձիթենու շուաքներով:  
 (Կանչում է նորան).

Աղջի, կլիտիա, այստեղ արի:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Որչափ սէգ է, արքայական  
 Նորա քայլքը: Ասես զիտէ,  
 Որ յետեկց անխօս, անտես,  
 Յաւերժհարսներն նիզակ առած  
 Հետևում են մեղմ սուրալով:

**ԳԵԳԵՍԻՑ** (Նորից կանչում է նորան):  
 Անուշ զաւակս, դու չես լսում:  
 Դէ, շուտ արա, այստեղ արի:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Շտապցնելու կարիք չկայ.

Թող որ հանգիստ ու հանդարտ դայ;  
 Նորա հանգիստ բայլքն անխռով  
 Կարծես անոյշ նուագ լինի:  
 Մի խանգարիր այդ ներդաշնակ  
 Վեհ ընթացքը, որ ակնածու  
 Իմ հայեացքս ագահաբար  
 Կըանում է: Խոկ թէ որչափ  
 Թագնուած շնորհ կայ այն հազիւ  
 Պարանոցի թեքուածքի մէջ՝  
 Այդ ես գիտեմ: Մի գիծ անդամ,  
 Զնչին մի գիծ աւել լինէր,—  
 Արդէն կորաւ աստուածային  
 Կերպարանքի ողջ վեհութիւն,

## ՏԵՍԱՐԱՐԱ, III

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ՊՐԱԿՍԻՏԵԼ և ԿԼԻՑԻԱ

- ԿԼԻՑԻԱ** (Իշխում է աջ կողմի քարաժայուի ոտնատեղերով: Դեղնուխին):  
 Դու ձայն տուիր, ինձ կանչեցի՞ր:  
 (Նկատում է զրակսիտելին և շատագունում):
- ԳԵԳԵՍԻՑ** Տես, քո առաջ Աթենացի  
 Մեր հիւրն ահա գլուխ ծուած,  
 Սարջացած և զղջացած՝  
 Ներողութիւնն իւր լրթերին  
 Քեզնից ներումն է ինդրում:  
 Ես նորանից չծածկեցի,  
 Թէ ինչպիսի ծանր անարդանք,  
 Վերաւորանք է քեզ հասցընել.  
 Բայց դու էլ շատ խիստ լինիս:  
 (Դուրս է գնում):

## ՏԵՍԱՐԱՐԱ, IV

ՊՐԱԿՍԻՏԵԼ ՍԻ ԿԼԻՑԻԱ

- ՊՐԱԿՍԻՏԵԼ** Խիղճս հանգիստ չէ տալիս ինձ.  
 Սիրտս ցաւում և տանջւում է,  
 Որ քեզ կլիտիա, վշտացըրի

Զմտածած խօսքիս շնորհիւ:  
 Ինձ դատելու իրաւումքը  
 Քոնն է միայն: Գո ձեռքով եմ  
 Դատապարտուած, — միթէ ուրեմն  
 Կասկածել իսկ կարող կլինեմ,  
 Թէ քո առաջ մեղաւոր եմ:  
 (Կլիոփիս լուս է):

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** (Մի գոր լսելուց յետոյ):  
 Հայրենիքումս չքնաղ կուսին,  
 Թէս լինի մահկանացու,  
 Աստուածային անուամբ կնքել  
 Մահացու մեղք չէ համարում:  
 Բայց այդ մասին ձեր նփեսում  
 Այլ կերպ մտածել են կամենում:  
**ԿԼԻՑԻՆ** Անցողակի միայն տեսար  
 Ինձ իմ տեղում... Բայց և այնպէս...

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Բայց և այնպէս:  
**ԿԼԻՑԻԸ** Իմ ինչիս մէջ,  
 Արդեօք, գաւր, այդ խարուսիկ  
 Նմանութիւնը:

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Գո շարժուածքի,  
 Դիմագծերիդ գեղ կերտուածքի,  
 Նուրբ իրանիդ, պայծառ արև՝  
 Վառ աշերիդ հայեացքի մէջ:  
 Ամեն բանով յիշեցնում ես  
 Արծաթվիրն աստուածուհուն.  
 Ընդունակ ես, անշուշտ, մերթ բուռն  
 Կրքով վառուիլ, մերթ ինքնասած՝  
 Քմշոտ լինել, մէկ էլ յանկարծ  
 Հեզիկ, քնքոյշ, սարսուռերկչոտ  
 Եւ ահարեկ լինել կրկին  
 Ինչպէս ինքը գիշերային  
 Հեղ թագուհին:

**ԿԼԻՑԻԸ** Ո՞վ է պատմել  
 Մէկիկ-մէկիկ քեզ այդ բոլորն:  
**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Ով է պատմել իմ աչքերս:  
 Ասա, հիմա, թէ որ աչքերս

Խարել են ինձ: Բայց այդ ասել  
Դու չես կարող: Բայց և այնպէս  
Բարկացել ես խեղճիս վերայ,  
Եւ մինչև իսկ լաց էլ եղել...

ԿԼԻՑԻՆ

(Աշխաւագ, որոշ):

Օ՛, ոչ:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ի՞նչպէս թէ ոչ. բայց ես գիտեմ:

ԿԼԻՑԻՆ

(Հայեացք նետելով դեպի Գեղեսի առնել):

Սուտ ու շինծու խօսք է թուցրել.

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ի՞նչո՞ւ համար ես լաց եղել:

ԿԼԻՑԻՆ

Արտեմափ աստուածային  
Նրկիւղով եմ ես մնծացել...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ուրեմն երկիւղն էր պատճառը:

ԿԼԻՑԻՆ Ի՞նչ հարցեր են,

ՊՐԱԿՍԻՏԵԼ

Նրկիւղը չէր:

ԿԼԻՑԻՆ Կարծելով թէ ծաղրում էիր...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Երբէք այդպէս չէիր կարծում:

ԿԼԻՑԻՆ

Խռոտովանիր առաջս անկեղծ,—  
Ինձնից, անշուշտ, շատ, շատ չքնաղ  
Գեղեցկուհիք ես դու տեսել  
Եւ շատերն են իրենց սէրը  
Քեզ նուիրել:

ՊՐԱԿՍԻՏԵԼ

Ամենքի մէջ

Աստուածային կայծ եմ փնտուել.  
Բայց քո առաջ տեսածներիս

Զքնաղ ախպար, կերպարանքներն,—

Նսեմանում ու թոշնում են:

ԿԼԻՑԻՆ

Եւ ով գիտէ քանի անգամ

Յանդգնաբար ուրիշներին

Նոյնն ես կրկնել, երբ նայել ես

Յաղթողի պէս՝ նոցա վերայ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ

Կեանքը կորած գանձ է միայն

Ով որ յանդուզն աչք չէ նետում

Մեղ պատահած դեղեցկութեան

Վերջին խօսքին:

ԿԼԻՑԻՆ

Այն բոպէին,

Ինձ թւում էր, թէ ամօթից  
Պէտք էր, որ ես գետին անցնեմ,  
Կամ թէ զլուխ առնեմ կորչեմ...

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Ապա ուրեմն երկիւղից էր,  
Համար այդշափ սարսափ ազդող  
Երևեցայ ես քեզ երէկ:  
Հապա հիմա:

**ՎԼԻՑԻՆ**                          **Այժմ հոգիս**  
Խաղաղ, լուռ է:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ**                          Ի՞նչն էր ուրեմն  
Խաղաղութիւն քեզ պարզեցն:

**ՎԼԻՑԻՆ**                          Արշալոյսի վառ շողերի  
Հէնց առաջին փայլփուքին՝  
Հարուստ զոհեր առած հետո  
Նս դիմեցի Պան-Շահապի  
Սուրբ անձաւը, որ շատ հնուց,  
Աւանդութեամբ, մեր՝ կոյսերիս  
Սրբավայրն է:

(Նաց հայեցքներն հանդիպում են Երար: Կվահան պր-  
լայլուսծ ոչքերը ցած է ձգում Մի փոքր լութեամից յեղյ):

Զէիր լսել:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Ո՞չ. չեմ լսել: Պատմիր, ինդրեմ:

**ՎԼԻՑԻՆ**                          Փամանակով Պան-Շահապը  
Այն մազմզուտ, թաւ աստուածը  
Սիրենքս չքնաղ յաւերժհարսին  
Հետեւում էր. և մի օր էլ  
Նեղը ձգած, տարաւ հասցըց  
Ահա, այս մեծ այրի դուռը:  
Յուսակտուր, անօդնական  
Սիրենքս հարսը զիցանուին  
Դիմեց լալով—արդահատել,  
Նեղ վիճակից փրկել իրեն:  
Արտեմիսը ընկերուհու  
Պաղատանքին ականջ դրեց  
Նւ եղէզնի փոխակերպեց:  
Պան-Շահապը կարծեց միայն,  
Թէ թագնուել է իւր ձեռքից

Յաւերժմարսը եղէգնի մէջ,  
Ուստի սկսեց ադահ, անյադ  
Համբոյր տեղալ նորա վերայ.  
Իսկ եղէգնիկն միայն մեղմիկ  
Հառաջներով պատասխանեց.  
Շահապն իսկոյն կտրեց եղէգն  
Եւ պրնդի ձևափոխեց.  
Իսկ օրինգը, ի յիշատակ  
Մասաղ կուսին՝ յաւերժմարսին  
Այնուհետև Սիրենքս <sup>1)</sup> կոչեց,  
Եւ քարայրի մութ անկիւնում  
Անձկոտ սրտով կախեց յուարեկ:  
Այն օրից դէս միայն աղջիկ,  
Կոյս՝ անարատ անձաւն երթալ  
Լոկ կարող են. իսկ թէ կոյս չէ,  
Այլ կին երթայ, իսկոյն սրինգն  
Լալահառաչ ձայն է հանում,  
Գետին ընկնում:—Ինչո՞ւ անխօս,  
Լուռ կանգնել ես:

## ՊՐԸԿՍԻՏԵԼ

Խնչ ասացիր:

ԿԼԻՏԻԸ Անուշադիր, թարթափում <sup>2)</sup> ես.

## ՊՐԸԿՍԻՏԵԼ Ես հիացած դիտում էի

Եւ հետևում ձեռքիդ քմշոտ,  
Նուրբ շարժումին: Խնչպէս աղատ,  
Անբունազրօս նու իւր ձեւերն  
Փոփոխում էր, նոր ձեւ առնում:  
Մէկը միւսից նուրբ, յաղթական,  
Իւր ձիւնափայր գեղ, հոլ բազկին  
Ամեն անգամ նոր փայլ տալով:  
Թէ որ նորա հարիւրաւոր  
Մէկը միւսից նուրբ, զգլիւիչ  
Շարժումներից գոնէ մէկը  
Գրոցովս խլել, անմահացնել  
Կարենայի...  
(Բանում է նորա ձեռքը).

<sup>1)</sup> Սիրենքս յունաբէն նշանակում է—սրինգ:<sup>2)</sup> Ցրուած, distract.

Իսկ այս չեռքը

Խիստ անողորմ է պատժում ինձ՝  
Իմ յանդուգն մեղքիս համար,  
Ինձ ցոյց տալով, թէ մինչև այժմ  
Ողկորուած արուեստագէտ  
Սըրէք, երբէք ես չեմ եղած,  
Այլ հասարակ մի գործաւոր:

ԿԼԻՑԻԸ

(Չեռքը գրւշութեամբ ալսաելով):

Այժմ այլ ես չեմ բարկանում,  
Պրակսիտել: Աստուածուհին  
Թող պահապան լինի գլուխու:

(Կամնում է գնաւ):

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Մի, մի գնայ: Աղաչում եմ.

ԿԼԻՑԻԸ Զէ որ հիմա հէնց լսեցիր,  
Որ ասացի, թէ այլ ես  
Զեմ բարկանում: Ել ինչ կուզես:  
ՊՐԱԿՍԻՏԵԼ. Մի բան միայն: Մինչև գնալ,  
Հեռանալու, եկ որոշիր:

(Ցց առլով գեղի նաւհանդիսով):

Հէնց այսօր իսկ արագաթն  
Նաւա խարիսխ կառնէ, կենէ  
Դէպի Աթէնք չուելու համար:  
Ինձ էլ, արդեօք, կառնէ հետք:

ԿԼԻՑԻԸ Ի՞նչ ուզմաւմ ես վերադառնալ:  
ՊՐԱԿՍԻՏԵԼ. Դու, դու միայն կարող կլինիս

Լուծել հարցը և վճիռ տալ:  
Ես չեմ կարող աստուածունու  
Անդրին ստեղծել, արձանացնել:  
Առանց քո ջերմ մասնակցութեան:  
Որչափ սխալ կարծիք ունիս:  
Ես սովոր եմ գնդակ նետել,  
Իլիկ մանել և քընարի  
Վերայ ածել: Իսկ քո գործի,  
Արուեստի մէջ ինչո՞վ պիտի  
Ես օգտակար հանդիսանամ:

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Միայն նորան մարմին տալով:

ԿԼԻՑԻԸ Ի՞նչ... ինչ ասացիր:

## ՊՐԱԿՍԻՑԵԼ

Լսիր, ասեմ:

Կիմտիա անունն ու Արտեմիս՝  
Երկուսն ևս համ-հաւասար  
Արժէք ունեն և ինձ համար  
Նոյն բաներն են:

## ԿԼԻՑԻԸ

Կամենում ես...

ՊՐԱԿՍԻՑԵԼ Խնդրում եմ քեզ՝ իրրե շնորհ  
Արտօնես ինձ, — հլու բազկով  
Քո հրաշալի դիմագծերդ  
Եւ ողջ մարմինդ կերպարանեմ,  
Մարմարիոնի ժեռ ու կոպտար  
Քարին յանձնեմ, որ պահպանէ  
Դարուց ի դար, մինչ յաւիտեան:  
ԿԼԻՑԻԸ Ո՛չ, ոչ, երբէք: Անկարելի  
Բան ես խնդրում:

Թէ կմերժես՝

ՊՐԱԿՍԻՑԵԼ Ես արձանի համար շնած  
Անդրուց զրկուած պատուանդանի  
Վերան միայն կը փորփրեմ՝  
«Անկարելի բան եմ խնդրում»:  
Ապա կրկին իմ հայրենի  
Աթէնքս կերթամ և ձեռք կառնեմ  
Կիսատ թողած խեղճ Կիպրիդս:

## ԿԼԻՑԻԸ

(Սնդուաբար).

Նորա համար նոյնպէս գտար  
Մահկանացուի չքնաղ տիպար:

ՊՐԱԿՍԻՑԵԼ Ուրիշ ինչ կերպ կարող եմ ես  
Արձան կերտել, ստեղծագործել:

ԿԼԻՑԻԸ Գեղեցիկ է գտած ուհիդ:

ՊՐԱԿՍԻՑԵԼ Դա ինչ խօսք է: Կասկածել իսկ  
Զի կարելի:

## ԿԼԻՑԻԸ

(Արօթից շառագունելով):

Օ՛, ամօթից

Կը մեռնէի: Զէի կարող:

ՊՐԱԿՍԻՑԵԼ Այժմ՝ այսօր ես չեմ ուզում

Պատասխանես: Ո՛չ: Դու հանդիսան

Ու անխոռվ ասածներս  
Լաւ որոճայ, կշոտդատէ:  
Ես կը սպասեմ. թէև անգործ,  
Պարապ կեանքը, անյայտութեան  
Հետ միացած, ինձ կսպանեն.  
Բայց և այնպէս՝ ես կսպասեմ:

**ԿԼԻԹԻՆ** Այժմ թող ինձ, որ ես երթամ:  
**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Բայց իմացիր, որ քո մերժումդ  
Պիտ ստիպէ, որ ես թողնեմ  
Իմ աշխատանքս, տուած խոստումս  
Եւ հեռանամ: Դորա հետ էլ  
Եւ քեզանից, կլիտիա, պիտի  
Ընդ միշտ բաժնուիմ: Եւ չգիտեմ  
Թէ գոցանից ո՞րն ինձ համար  
Մանը կորուստ պիտի հաշուեմ:

**ԿԼԻԹԻՆ** Ես... Ուզում եմ... Պրակսիտել...

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Ի՞նչ պատահեց: Դու դալկահար...  
Ուշաթափուում... անզօր... կլիտիա...

(Ըստում է իւր գրկի մջև և արագ համբուրում շըր-  
թունքները):

**ԿԼԻԹԻՆ** (Դուշակ, կամաց ձայնով):  
Թող ինձ հանգիստ... խնդրում եմ քեզ...

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Ուրեմն երբ կարող եմ ես  
(Այս) լսել քո բերանից:

**ԿԼԻԹԻՆ** Ինքս էլ դեռ ոչինչ չգիտեմ:  
(Գնում է գեղեսիլի առնը):

### ՏԵՍԱՐԱԿԻՆ Վ

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** (Յետոյ) ՄԵՏՐՕԴՈՐ և ՀԵՐՈՍՏՐԱՏ.

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** (Մեղմակ):

Օ՛, մեղրածոր, քաղցր շրթումք,  
Դուք ինձ, անշուշտ, կը դարձնէք  
Այն բոլորը, ինչ որ այսօր  
Զեզ յանձնեցի և ստացաք:  
(Մետրօդորն ու Հերոստրատն երեսում են վերջին տան  
շեմքէց):

## ՄԵՏՐՈԴՈՐ

(Հերոսաբարին):

Առա ինքը, Թող հէնց անձամբ  
Աստծոներս քեզ հաւասաէ  
Քանի որ դու չես հաւատում:

(Գնում է գեղի եւր առաջ՝ ապագանից):

## ՏԵՍԼՐԱՐ, VI

ՊՐԱԿՍԻՑԵԼ ԵՒ ՀԵՐՈՍՏՐԱՏ. (Քիչ յետոյ) 208Ա, ԼԻՍԻԼԱ  
ԵՒ ՖԷՇՆԻԴԱ.

(Մասնաւով Հերոսաբարին):

Կտեսնեմ թէ ոչ քեզ խնճոքում,—  
Բայց լնկերոջ եմ ձեռք մեկնում  
Պինդ սղմելու և թոթուելու:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մենք դեռ իրար ծանօթ էլ չենք:

ՊՐԱԿՍԻՑԵԼ Հմուտ ձեռքիդ ու արուեստիդ  
Գործերն վաղուց ինձ ծանօթ են.  
Մենք օտար չենք:

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Թագաւորներն

Շատ հեշտութեամբ համեստութեան  
Տէրն են գառնում:

ՊՐԱԿՍԻՑԵԼ

Օ՛, մի ասիլ,

Թագաւոր չեմ:

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Գորա փոխան

Պրակսիտել ես.

ՊՐԱԿՍԻՑԵԼ

Գու—Հերօֆանտն:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ դեռ յամառ հաւակնութեամբ  
Ուզում էլ ես ինձ համոզել,  
Թէ իմ անունս նոյնչափ դիտես,  
Որչափ ես քոնն:

ՊՐԱԿՍԻՑԵԼ

Այն, կասեմ,

Հերօֆանտն ես:

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Իմ անունս

Հերոսարատ է,

ՊՐԱԿՍԻՑԵԼ

(Թեթևակի շփոթուելու):

Ճիշդ հէնց նոյնը

Ասել կուզեմ: Սխալանքս  
Խնդրեմ ներել:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**      **Հէնց այդքանը**

Ապացոյց է, թէ ինչպիսի  
Սար ու ձորեր ու անդունդներ  
Բաժանում են մեզ իրարից:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Ո՛չ, սխալ ես: Ասա, խնդրեմ,

Ի՞նչ կարող է մեզ արգիլել  
Կամ խանգարել բարի կապեր  
Պահպանելու: Մըցութիւնը՝  
Թշնամանք չէ: Նոյն բանակի  
Զինուոր ենք մենք: Միւնոյն չէ,  
Թէ մեզանից, որի կառքը  
Շուտ կհասնի օրոշ կէտին:  
Նրկուսս էլ մի անքածան  
Նպատակի ծառայող ենք,—  
Սուրբ արուեստի ստրուկներ ենք:

(Նկատում է աղջիկներին, որոնք ձաւ կողմց՝ Մեսո-  
րոդորի անց ենելով, յամբույլ առաջ են գնում):

Տես, ինչ չքնաղ ծաղկէփունջ է:

Առաջ բարի, գեղեցկուհիք:

**ԶՕՑԱ**      **Մետրօդորի տունն ենք գնում:**

**ԼԻՄԻԼԱ**      **Մենք հարկեի ողջ ժամանակ  
Պիտի պարենք, լորուստ <sup>1)</sup> երգենք...**

**ՁԵՌՆԻԴԱ**      **Եւ թէ շոյենք ու պարարենք  
Քմահաճոյ, բաղդի զաւակ  
Աթէնքի ճետ հիւրի ականջ  
Ու աչքերը:**

**ՊՐԱԿՍԻՏԵԼ**      **Փառք և պատիւ**

Հիւրընկալող տանտիրոջը:

(Աղջկներն ուրած քրքիլով գնում են Մետրօդորի-  
առանց՝ նոխագահից):

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Զարմանում եմ, որ դու այդպէս  
Թէ անհոգ ես և թէ ուրախ:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Բայց ինչու ես ուրախ չլինեմ:

<sup>1)</sup> Լորուստ=Թեթև բովանդակութեամբ, բաց երգերւ

ՀԵՐՈՍՏՐԱՏ Երէկ միայն գեռ նժո՞ր տեսար  
Աստուածունու մեծ մեհեանը:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այս, յետոյ:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Իւ նա հոգիդ  
Զընկճեց, ճնշեց:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ամենելին:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դու չես խորհել, մտմտացել  
Գործի մասին, որի համար  
Քեզ կանչել են:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այն գործն արդէն  
Կազմ, պատրաստ է:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ի՞նչ ես ասում...

Ի՞նչպէս թէ կազմ ու պատրաստ է:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Իրար մի քիչ լաւ հասկանանք:

Կազմ, պատրաստ է գաղափարը:  
Դու լաւ գիտես, ինչ խօսք դորան, —  
Որ ամեն բան, ինչ որ կերտում,  
Ստեղծում ենք՝ չնորհւում է  
Մեզ մուսայից մի վայրկենում  
Եւ կամ երբէք:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մեր տաճարը

Հարիւրաւոր տարիներում

Հազիւհազ է շինուել, պրծել:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Հարիւրաւոր տարիներ են

Անցել, սահել, որովհետեւ

Ծանր, կոպտար, յամառ քարել

Պէտք էր տաշել ու յարդարել

Եւ թէ երկինք, տանել-հասցնել,

Բայց հէնց նորա՝ այդ տաճարի

Հսկայական անդամների

Խիստ վեհապանծ ու կատարեալ

Ազատ, անշեղ օրէնքի խօսք

Ամբողջութիւնն մեզ՝ ամենքիս

Համար շատ պարզ ապացոյց է,

Թէ մեծ վարպետ՝ արուեստգետի

Ճարտար զվարում ձեր տաճարի

Նախատիպար գաղափարը  
Մի վայրկեանում է յղացել,  
Ծնունդ առել: —Կասկածում ես:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**      Ե՞ս... ոչ. երբէք:  
Եւ դու նոյնպէս մի կասկածիը, —  
Այժմ շատ պարզ հասկանում եմ  
Խաղած խաղդ:

**ՊՐԱԿՍԻՑԵԼ**      Խաղ. իմ կողմից:  
**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Դեռ այս գլխից խնջոքների  
Թունդ հրաւէր, համակրութեան  
Մեծ մեծ խօսքեր, այնուհետև  
Կեղծ ու պատիր անդորրութիւն,  
Ուրախ, անհոգ արտաքին տեսք,  
Իբրև թէ այն վսեմ գործը,  
Խաղ ու պար է լոկ քեզ համար, —  
Թեթև ջանքով հիւսած պսակ  
Որի համար չարժէ նոյն իսկ  
Եւ ձեռք մեկնել: Այդ բոլորն էլ  
Այն պատճառով, որ ցոյց տաս թէ  
Հուշակ հանած արուեստգէտ ես  
Եւ մըցակցից երկիւլ կրելու  
Տեղիք չունիս իսկ յաղթութիւն  
Վաստակելու՝ վաղուց արդէն  
Հաւատացած ու վստահ ես, —  
Կամկած չունիս:

**ՊՐԱԿՍԻՑԵԼ**      Ես անարդար  
Կասկածներից վիրաւորուել  
Չեմ էլ կարող: Երէկ արդէն  
Նկատեցի, որ չկայիր  
Դիմաւորող ժողովրդի  
Շարքերի մէջ բայց որպէս զի  
Դու էլ, իրաւ, տեղեակ լինիս  
Այն պատճառին, որն ստիպեց  
Ինձ հաւատալ, թէ յաղթութիւնն  
Այս գործի մէջ քոնն է միայն...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Հնարաւոր բան է միթէ...  
Եւ դու ինքդ, քո բերանով...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դու հայրենի հողի վերայ  
 Ամուր կանգնած և քո աղջի  
 Հաւատալիք — աւտնդութեան  
 Քաջ հմուտ ես. ուստի և նա  
 ձարտար ձեռքիդ ու արուեստիդ  
 Հմուտ գործը իւր խոհերի,  
 Զգացմունքի արտայայտող  
 Ճշգրիտ պատկեր պիտ համարէ,  
 Խոկ ես խոկոյն քո նփեսցոց  
 Աչքի առաջ գաղտնիքս բացի,  
 Թէ իւր պաշտած աստուածուկին՝  
 Խճ օտար է, նա իմս չէ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (ՇՆՀԱՍՏՊԱՆ):

Նորան, անշուշտ, կը ցանկայիր  
 Շատ առաւել բարձր ու ահեղ  
 Արձանացնել.

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ընդհակառակն՝  
 Շատ առաւել վոքը չափով,  
 Ոչ էլ այնքան ահեղ տեպքով:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Հասկանում եմ, — փղոսկր, ոսկի  
 Յետ ձգելու վարպետ միջոց:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Պարզ մարմարիսն է ընտրածու:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Աելի ու աւելի ժամ առլու իւր համել հիանթափութէնը):  
 Աստուածունու անդրու համար:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Գեղեցկութեան ախար կնոջ  
 Մարմնի համար:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Հանաք է, հա:

Աստուածունին մի գեղեցիկ  
 Կնոջ նման. Նւ սրբապիղծ  
 Մաքերդ արդէն խիզախեցիր  
 Արտայայտել ժողովրդի  
 Աչքի առաջ:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դեռ աւելին:

Նոցա նոյն իսկ իմ հրաշալի  
 Դիցանոյշի չքնաղ ախարն  
 Խճս անձամբ ես ցոյց տուի:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Կին արարած:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այս, մի կին,

Մի ձքնաղ կոյս:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ ժողովուրդն

Ու քըմերը—լուռ, անխռով

Այդ լսեցին:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ո՞չ. վրդովուած:—

Բայց ինձ ներիր: Շուտով արդէն

Մեզ խնճոյքի կը հրաւիրեն

Իսկ ես պսակ և տօնական

Զգեստ անդամ չունեմ վրաս:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դու ես ասում քո բերանով,—

Վրդովմունքով քեզ լսեցին

Եւ դեռ դարձեալ դու ուզում ես

Աստուածուհուն արձանացնել

Այնպէս, ինչպէս դու ես մտածել:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Հապա ուրիշ կերպ կարմղ եմ:

(Գհում է Մետրօդորի առաջ՝ նախադաշից):

## ՏԵՍԱՐԱԿԻ, VII

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Յետոյ ԿԼԻՏԻԱ.

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Միայնակ. մի փոքր լութիւնից յետոյ, «Դեօրութեամբ»):

Լսածներս երազ չեմին...

Թէ ես սխալ, թիւր հասկացայ...:

Այստեղ, այստեղ կանգնած էր նա

Եւ խօսում էր... 0<sup>o</sup>, աստուածներ:

Նորից սիրոս յուսով լցրիք:

Եւ յաղթանակ, և' փառք, և' սէր...

Սէր, սէր անվերջ:

(Մրադ քայլերով մոնում է գեղեսի առնեն ու  
կանչւմ է):

Կ'յ, դռնապան:

Շուտով գնա, կլիտիային,

Այստեղ կանչիր: Ասա, նորան

Ուրախ լուրերն դռան առաջ

Սանձակոտոր ու անհամբեր  
Զիու նման իւր շէմքելն են  
Դոփում, զարկում:

(Դառնալով դէպի Մետրօդորի առձնը):

Դէ, շտապիր,

Պրակսիտել, խնճոյք գնա,  
Ծաղկներով քեզ զարդարիր:  
Խոկ իմ խնճոյքս մի քիչ յետոյ  
Կը կատարեմ շատ առաւել  
Ճոխ ու շքեղ, քան կերազես:

ԿԼԻՑԻԱ

(Տնից ելեւով, հիասթափ և այլայլուած նորա աեսքից):

Հերոսարանտ... Դու ես միթէ...

ՀԵՏՈՍՏՐԱՏ

(Շատապելով դէպի նա):

Այն, կիտիա, Հերոսարանտ է:  
Բայց ոչ այն ժանդ ու կասկածուա,  
Յօնքեր կիտած Հերոսարատ,  
Որին սովոր ես միշտ տեսնել,—  
Ըլ ապահարկ կապանքներից,  
Ազատ սրտով, վստահ հոգով,  
Այժմ ահա թէ ով եմ ես,—  
Եւ ինչպէս եմ դէպ քեզ դիմում:

ԿԼԻՑԻԱ

(Ցեղայելով բաշուելով):

Քեզ ինչ եղաւ, բան պատահեց:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Տես, լայն բացած բազուկներով.

Քեզ եմ դիմում, գրկել խնդրում  
Եւ պահանջում, ինչ որ վաղուց  
Իմս է եղել իրաւունքով.  
Մի ժամ միայն, ժամ երջանիկ...  
Ստիպիր ինձ, որ ես մոռնամ  
Աստուածուհիս... այժմ արդէն  
Դու կարող ես, այդ ոյժն ունիս:

ԿԼԻՑԻԱ

(Հեղնելով):

Կարմիր եմ ես...

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Պարտաւնը ես:

ԿԼԻՑԻԱ Բայց դիցանոյշդ կթողնի՞ այդ:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այն, կիտիա, համոզուած եմ,

Քաղցր աչքով պիտի նայէ:  
 ԿԱԻՑԻԱ. Բայց ինչն, արդեօք, նորա բարի,  
 Քաղցր հայեացքն ու հաճութիւն  
 Քեզ պարգևեց:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օ՛, լսիր ինձ:

Երէկ՝ երկար տանջանքներից  
 Յետոյ միայն կարող եղայ  
 Գտնել այն ձեռն, որ արժան է  
 Նորա ահեղ, աստուածային  
 Կերպարանքին: Իսկ պարծենկոտ  
 Աթենացի արուեստգէտը,  
 Գիտե՞ս ինչպէս կը կամենար  
 Պատկերացնել աստուածուհուն:  
 Ողջ աշխարհի վեհ թագուհուն:  
 Ինչպէս չքնաղ, գեղեցկատիպ  
 Մի կոյս, մի կին... այդչափ միայն:

ԿԱԻՑԻԱ. (Սաստիկ յուզուած ու պլայլուած):

Ես...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դու, այս, զարմացած ես:

Մի մտածիր, մարմարիոնից  
 Կերտած տիկնիկ՝ մի խաղալիկ,  
 Եղծանելի ու վաղանցուկ  
 Գեղեցկութեան նմանութիւն՝  
 Եփեսոսի Արտեմիսի.  
 Ուկի գահի վերայ բազմած:

(Կլիտիան մացել է շփոթուած, չիմանալով ինչ  
 պատասխանէ):

Ա՛, դու լուռ ես,—դա մօտալուտ  
 Բաղդ ու յոյսի նախազգացումն  
 Է շնչում քո ականջին.  
 Դու զգում ես, որ ակնապիշ  
 Երկար ատեն իմ սպասոած  
 Ուրախութեան ժամն է զարկում:  
 Արի, երթանք մենք թևանցուկ  
 Հզօր ու սուրբ աստուածուհու  
 Ողջակիցի բեմի առաջ.

(Կամենալով գրկել նորան):

Գնանք, գնանք:

## ՏԵՍԼՐԸՆ ՎԻ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿՐԱԿՈՒՑՆԵԼ.

## ՊՐԱԿՍԻՏԵԼ

(Տօնական գդեստով, զմիկն պսակ, գուրու է գուրու Մետրոգորի առաջին դռնից և նկատելով  
Կլիսիային, ուրախ զարմանքով):

Ի՞նչ եմ տեսնում—Զուր տեղն երբէք  
Ներբին ձայնիս ես չեմ լսել:  
Ո՛չ, մի օր իսկ չէի կարող  
Ես կեանք անցնել և կամ ուրախ  
Խնձոքի մէջ թինկ-տալ, պառկել,  
Մինչև որ քեզ կրկին անգամ  
Զը տեսնէի:

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Պրակսիտելին):

Ճանաչում ես,

Ուրեմն, սորան:

## ՊՐԱԿՍԻՏԵԼ

Եւ կարող ես  
Ինձ այդ մասին դեռ ևս՝ համրց տալ:

## ԿԼԻՏԻԱ

(Աղերսադին ձայնով Պրակսիտելին):

Լուիր: Նա գեռ չէ կասկածում:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ա՛... Ինչպէս թէ... նա չգիտէ  
Այն, ինչ որ ես բարձր ձայնով  
Ժողովրդին պարզ յայտնեցի:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Սա ինչ բանէ, ասա, Կլիտիա:

ՊՐԱԿՍԻՏԵԼ Թէ գուցէ նա պիտի լսէ

Ուրիշներից և մտածէ,

Թէ վատարար թագցրել եմ

Միայն իրնից:

## ԿԼԻՏԻԱ

(Աղերսար):

Ո՛չ, պարզ ասա,

Ասա բոլորն, պատմիր իրեն

Եւ մի թագցնիր.

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Կլիտիային):

Դուք... այդ դժու ես,

Կլիտիա, խօսիր:

## ՊՐԱԿՍԻՏԵԼ

Բայց կարելի

Բան է միթէ: Այսօր,—ինչ խօսք,—  
Դու առաջին անգամը չէ,  
Որ տեսնում ես կլիտիային,  
Նև քեզ ու քեզ գլմի չընկածը,  
Գոնէ այժմ, թէ ինչ կոյսի  
Մէջ եմ գտել աստուածուհիս:  
Սորա նման կամ հաւասար  
Շատերն ունես նվիտուամ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Անլուր ամօթ և նախատինք:  
Եւ դու երես դեռ ունեցար  
Ժողովրդի ողջ բազմութեան  
Առաջն ասել... Ասել սորա  
Հէնց երեսին...

(Կլիտիային):

Երէկ նորան

Ականջ դրիր, այսօր անգամ  
Դու լուսմ ես,—և բարկութեան  
Այնքան պաշար մէջդ չեղաւ,  
Անօրէնի երեսն ի վեր  
Բարձր ձայնով դու գոռայիր,  
Որ նա այդպէս լպիրը կերպով  
Ուզով կոխեց սրբութիւնը:

**ԿԼԻՏԻԱ** — Ո՛չ, Հերոստրատ...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** 0'...

**ԿԼԻՏԻԱ** Ամենակն

Նա սրբապիղծ բան չէ արել:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Թշուառական, ուշքի արի:

**ԿԼԻՏԻԱ** Ականջ դիր ինձ: Խելայեղ չեմ.  
Գիտեմ հաստատ, համոզուած եմ,  
Որ նա բնաւ անհաւատ չէ,  
Իոչ սրբութիւն ուզով կախող,  
Այլ հաւատւոր. ջերմ հաւատն է,  
Որ խօսում է այդպէս վառուած:  
Բոլոր հոգովս ես զգում եմ,  
Իւր բոց խօսքով, հուր շրթունքով,  
Նըրէք, երբէք ոչ մի արատ  
Ու նախատինք իմ անուանս

Ու իմ պատուիս չէ հասցրել.  
 Ընդհակառակն մեր առօրենայ  
 Նեղ շըջանից, մեզ շուրջ պատող  
 Գծուծ երկրի իմ քոյրելից  
 Առել-տարել, բարձրացրել է,  
 Եթեր հանել:

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** (Ոգևորուած հրուտ նայուածքով դիտելով Կլիսիսին):

Ազատ, վստահ,

Թեթև-թեսով դու իմ յոյսերս  
 Առար, տարար, երկինք հասցրիր:  
 Աչքերս, իրաւ, չը խարեցին:  
 Ինչ որ քո մէջ տեսայ, զգացի,  
 Այդ ամենը և աւելին  
 Մէջդ պահած, ծրարած ունիս:  
 Ինձ լիովին ըմբռնել ես:  
 Եյժմ խնդիրս դու չես լսիլ:  
 Դեռ իմ նաւս խարիսխ ձգած  
 Սպասում է: Կ'արտօնես ինձ...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Լուիր, Խզուր մի հրապուրիր,  
 Գլխից հանիր: Եթէ նոյն իսկ  
 Համաձայնէ՝ աղաչանքիդ  
 Զայնին լսէ, ես կարգիլեմ:

**ՊՐԱԿՍԻՑԵԼ** Ո՞վ քեզ, արդեօք, այդպիսի լայն  
 Իրաւունքներ բաշխեց, տուեց:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Կլիտիս, սա դեռ հարցնում է  
 Թէ մի արդեօք, ինձ այդպիսի  
 Իրաւունքներ տուեց, շնորհեց:  
 Նա իմս է, իմս, գիտես:  
 Նորան վաղուց, շատ վաղուց է  
 Սիրում եմ ես. սիրել, տանջուել,  
 Եւ լոել եմ. սրտիս խորըում,  
 Խոր անկիւնում կիրքս ծածկել:  
 Տարիների դառն տանջանք,  
 Տանջուած սրտի լեղի վշտեր  
 Չարչարել են մեզ միասին:  
 Նա իմս է: Խոկ դու հազիւ  
 Իրէկ միայն դեռ ոտք դրիր

Մեր ափերին և հէնց այսօր  
Հարցնում ես, ո՞ր օրէնքով,  
Իրաւոնքով կարող եմ ես  
Արգելք դնել...

ԿԼԻՏԻԱ.

Եւ ոչ մի բան

Դու արգելել ինձ չես կարող:

ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Գոռալու):

ԿԼԻՏԻԱ.

Եւ դժու, Կլիտիա:

Ազատ Յօնիոյ

Ես զաւակ եմ. ոչ մի երդում,  
Ոչ մի շղթայ ինձ չեն կապում:  
Ենա արդէն ամիսներ են  
Անցել-գնացել այն օրից դէս,  
Երբ առաջին անգամ քեզնից  
Սիրուդ մասին խոստովանանք  
Ես լսեցի: Եթէ միայն  
Լոկ մի վայրկեան մոռանայիր  
Այն ըովէին սիրուս համար  
Փառքիդ տենչանք աստուածուհուդ,—  
Վաղուց արդէն ես քոնն էի:  
Բայց դու անսիրտ յետ մղեցիր,  
Եւ մերժեցիր ձօնած ընծաս:  
Անցան ժամեր, օրեր, շաբաթ  
Եւ ամիսներ,—և միշտ միայն  
Արտեմիսիդ համար հարուստ,  
Առատ էիր, իսկ ինձ համար՝  
Միշտ կուչ եկած, կծկուած բազուկ,  
Աղքատ էիր: Ազատութիւնս  
Չը կապտելով, այժմ գլխիս  
Տէր դառնալու, հրաման տալու  
Դու կամք ունիս: Քեզնից ոչինչ  
Չեմ ստացել: Եւ չ'տուածդ  
Տօկոսներով առնել կուզես:

(Նայում է Կլիտիոյին անթարթ ոչըերօգ. Հերոսարտակին):

ՊՐԱԿՍԻՏԻԱ. Օ՛, ասա, ինձ: Փանի-քանի  
Գործերիդ մէջ անմահացրիր,  
Արձաններից որի՞ մէջը

Մարմնացրիր սորա նրբին,  
Աստուածային մարմնի ձեռք:  
Դու լոնմ ես: Դու չես խօսում:  
Եւ ոչ մի տեղ: Ձեմ հաւատում:  
Բայց թէ սախզուած ես հաւատամ,  
Ապա նորից պիտի հարց տամ,—  
Ո՞վ քեզ տուեց այդ իրաւունքն,  
Որ ամենքից թագցընէիր  
Այս արմաղան, անդին գանձը,  
Որին այնքան երկար ատեն  
Տէր լինելով՝ չօգտուեցար  
Ոչ մի բանով:

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Կամնալով տանել կլիտիցին):

Գնանք, գնանք,  
Կլիտիա, դէ, եկ: Քեզ պատասխան  
Ուրախութեամբ տալ պատրաստ եմ,  
Բայց պրտկերես այս եկուորին՝  
Ամենեին, որը արբած  
Իւր արփաթև փառքի փայլից  
Եւ իւր բոլոր կիրք-ցանկութեան  
Գլխից հանած սանձ ու կապանք,  
Քո առաջդ բոցբորբ յոյզերն  
Անուշ խօսքի կեղծ հանդերձանք  
Հադցրած՝ կուզէ խելքդ առնել:  
Միայն ուզիր և պահանջիր՝  
Եւ ես սիրով ոտքերիդ տակ  
Կը տարածեմ սրտիդ ուզածն...

ԿԼԻՏԻԱ. Եւ կիսես նորա ընծան:

ՀԵՏՈՍՏՐԱՏ (Ցուսահատ):

Օ՛, եկ, գնանք:

ԿԼԻՏԻԱ.

Ի՞նչ յուսարձարծ

Ընծաներով դու միտք ունիս  
Ինձ հրապուրել, մղօնել-տանել.  
Քո ապագայ փառք ու պատուով:  
Բայց ինձ ինչ նա: Ես կին եմ, կին:  
Դու հետհա, վուազ-շտապ  
Երազական փառք ես փնտուում,

Այն էլ միայն լոկ քեզ համար.  
Խոկ նա բացեց և իմ առաջ  
Անմահութեան տանող դռներն,  
Եւ դորա հետ խոստանում է  
Մատաղ կեանքի անանց հրապոյր:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինքս էլ աղքատ չեմ այդ կողմից:  
Կարծում ես թէ սրով ալքից  
Ժայթքած արիւնն արժան բան է:  
Համակշիռ, ծանր չեն գայ  
Իմ ջերմ սէրս, անձիս ձօնը,  
Եփուն յուսով ողջ էութիւնս  
Բերած զոհս, քան շողոքորթ  
Եւ հնհնուք սորա խօսքերն:

(Պրակիտուելին):

Օ՛, թող սորան: Թող, հեռացիր:  
Աստուածները քեզ հետ հաշիւ  
Պիտ ունենան: Եւ մի ձգտիր  
Թեթև ձեռքով, խաղ ու պարով  
Մանդղել, ինչ որ ուրիշներին  
Է պատկանում: Թող տուր սորան:

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Կլիտույին):

Սպատ կամքով ընտրիր, Կլիտիա:  
Եթէ սրտից արմատաքի  
Քանցես, հանես ծաղկափթիթ  
Այն յոյսերը, որ քո ձեռքով  
Սընուցել ես,—ապա գիտցիր,  
Որ իմ բերնից և այդ պահուն  
Կշտամբանքի խօսք չես լսիր:  
Ինքդ վճռիր: Դեռ ար եը  
Մայր շմտած իմ նաւս արդէն  
Սպատ ծովին յանձնուած կլինի...

ԿԼԻՏԻԱ. Բայց առանց քեղ:

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Չեռները նորան մեկնելով):

Վճռեցիր դու:

(Կատաղած):

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Խարուած, առակ-նշաւակի  
Նիւթ եմ եղած, ուգի կոխան

**Մարդ եմ դարձած:** Մոռայլ դժոխք,  
Քեզ եմ դիմում, դու օգնիր ինձ...

(Վաղում է դեպի Գեղեսիքի տան սրահակը և Պրակ-  
սիտում ու Կիտում ծածուց, խում է պատից կախած  
վաճառ հանած դաշտներից մէկը):

**ՊՐԱԿՍԻՏԵԼ.** Ուրեմն այդպէս. ես կը մնամ:  
Այստեղ մի նոր Աթէնք գտայ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

(Ա երադառնալով բեկ-բեկ ձայնով):

Մոռցիր, վատթար, ամօթալի  
Առաջարկիդ լսիր խօսքեր:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Երբէք ինձնից այդ չես լսիր.

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Յարձակում է և նորա վերայ մրկացրած դաշտով):  
Մեսիր ուրեմն:

**ԿԼԻՑԻԱ**

(Ընկնում է նոցա երկուսի մէջ պաշտպանելով  
իրենով Պրակսիտելին):

Ո՛չ... Խ'նձ առաջ...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

(Օրօբռուելով յետոյեա է գնուր):

Ուրեմն նորան դու սիրում ես...

(Խըն իրեն կորցրած):

Որ նա ապրէ ու անդադար  
Ծաղը ու ծանակ ինձ դարձնէ,  
Ո՛չ. լսում ես:

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** (Նորից կամնում է յարձակուէ Պրակսիտելի վրայ):  
(Առաջ անցնելով):

Առաջդ կանդնած,

Կեցած եմ ես, Հերոստրատ:  
Եթէ այդ է ուզած վառքի, —  
Զարկ, սպանիր և թող տկար  
Ոյժիդ համբաւ ողջ Հելլադան  
Առուահուչ. Ամեն բերան  
Կաղաղակէ, որ ինձ մեռցրիր,  
Որովհետև քո գրոցով  
Ինձ յաղթելու ոյժ չունեցար:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Բալրուդին ամօթահար և ոչնչացած):

Օ...

(Դաշունն ընկնում է նորա ձեռքից. նա կանդ-  
նած է քարացած):

ՊՐԱԿՍԻՆ,

(Քերշութեամբ գրկան պահում է դռւածող  
կլիափային և ուզեկցում է նորան մինչև իրենց  
տան դուռը):

Նորան այժմ թող տուր մենակ.  
Իսկ ինձ համար՝ մի վախենալ.  
Այժմ արդէն զինաթափ է:

ԿԼԻՑԻԱ.

(Դռան առաջ վրդովմունքով):

Բայց և այնպէս...

ՊՐԱԿՍԻՆ,

(Շնչառելով):

Վաղն ուրեմն:

ԿԼԻՑԻԱ.

(Մ'եղմով):

Այս, վաղը:

(Մանում է տուն Մետրօդորի տնից լուսում են  
կիթառի և որնդի ձայներ, որ շարունակում  
է մինչև գործողութեան վերջը):

ՊՐԱԿՍԻՆ,

(Աերադառնալով առաջ է անցնում):

Ուրախ, վիայլուն

Խնճոյքն արդէն սկսուել է:—

(Հերոսորատին):

Անմիտ, արի դու ինձ լսիր  
Եւ երգերի ձև յների մէջ  
Թեթևութիւն, հանգիստ փնտուիր:  
Կեանքը, կասեմ, կարծածիդ շափ  
Դառնահամ չէ: Սիրտդ միայն  
Դու յաւիտեան ուհիներից  
Մէկին չտաս... Ալրել գիտցիր  
Միմիայն կեանքը, կեանքը միայն,  
Եւ հաւատայ ասած խօսքիս,  
Երբէք կեանքը մեզ չի խարի:  
Ճակտիդ վրայի կնճիռները,  
Թող յուսարծարծ ժպտի փոխուին՝  
Կիտած նոթերդ՝ հրուտ նայուածք,  
Դանգուրներդ բոյր պսակով  
Դու զարդարի: Անոյշ նեքտար,  
Հընետ ցայքով պլուած գինի  
Առ ձեռքդ, եղայր: Հայեացքներս  
Գեղեցկունու, պար-կաքաւով  
Պարարելով, մենք միասին

Ոյժ կունենանք փառքն ու հոչակ  
Այլպանելու:

### ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Մարտ, յուսականը ձայնով):

Փառքը ծաղիկ  
Կարող է նա, որի ափում  
Սղմուած է նա:

(2եռքի հրամայական շաբաթումով)

Գնա:

(Պրակսիտելն ուսերը թօթուելով զնում և Մեաբու  
Դորի սունը՝ նախադանից):

### ՏԵՍԼԵՐՆԻ, IX

#### ՀԵՐՈՍՏՐԱՏ (մհակ):

### ՀԵՐՈՍՏՐԱՏ

(2եռները վեր է բարձրացնում աղօթողի պէս):

Ո՞վ Արտեմիս, հզօր աստուած,  
Շող ու լոյսի աղքիւր, կենդրոն,  
Դու կատարիր ինձ խոստացածդ,—  
Փոփոխամիտ ու յեղյեղուկ  
Կին ջես, անջուշա: Վըէժինդիր  
Եղիր դէմս լարած խարդախ  
Նենգժտութեան, Քն իսկ պատուի:  
Վըէժինդիր եղիր նոցա:  
Շնորհիր ինձ ոյժ, կարողութիւն,  
Երկինք հանել քո մեծութիւն,  
Պատուհասել ուխտազանցին  
Ինձ փառք շնորհիր, փառք ապաբաղդ:  
Քեզնից շնորհած կեանքս հանիր  
Այս աշխարհի վէս հիւրերից  
Շատ վեր, շատ վեր:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Ց Ր

(Վերջը հետեւեալ համարում)